



ՎԱՍԵՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԳԱ ԱՆՀՆԱՐ Է

Մի անգամ գերմանացի միկրոբիոլոգ Ռոբերտ Կոխին, որը շնայած իր համաշխարհային փառ-
փին ու զբաղվածությամբ սիրով ու մեծ ուշա-
դուրյամբ բուժում էր հասարակ մառդկանց,
հրավիրում են կայզեր Վիլհելմի մոտ:

— Հուսով եմ, որ դուք ինձ կբուժեք ո՛չ այն-
պես, ինչպես ցնցոտիավորենին ձեր հիվան-
դանոցում, — հարցնում է միապետը:

— Վախենում եմ, որ դա անհնար է, ձերդ
մեծություն, — արժանապատվությամբ պատաս-
խանում է Կոխը, — չէ որ ասում են, թե իմ
հիվանդներին ես բուժում եմ ինչպես արհա-
մերի:

Մի անգամ Ամպերը մտնում ինչ-որ հաշվում-
ներ անելով ֆայլում է փողոցում: Հանկարծ նա
իր առջև տեսնում է ճիշտ այնպիսի գրատախ-
տակ, ինչպիսին լսարաններում է: Ուրախա-
ցած նա վազում է դեպի գրատախտակը, զբը-
պանից հանում մի կտոր կավիճ, որ միշտ իր
հետ ունենում է, և սկսում է բանաձևեր գրել:
Սակայն տախտակը հանկարծ պոկվում է տե-
ղից և հեռանում նրանից: Ամպերն առանց
գիտակցելու, թե ինչ է անում, զենում է նրա
ետևից: Գրատախտակը մեծացնում է արագու-
բյունը: Ամպերը սկսում է վազել: Եվ միայն
անցորդների ընդհանուր ծիծաղը սրափեցնում
է նրան: Այն ժամանակ միայն նա նկատում է,
որ իր բանաձևերով լցված գրատախտակը սև
կառերի ետևի պատն է:

ՄԵՏԱՖԻԶԻԿԱ

Գերմանացի ֆիմիկոս Օտտո Հանին մի ան-
գամ հարցրին, թե ինչ է մտածում նա մետա-
ֆիզիկայի մասին:

— Մետաֆիզիկան, — ծիծաղելով պատաս-
խանում է գիտնականը, — դա սև կատվին
հայտնաբերելու որոնումներն են մութ սենյա-
կում, ուր ընդհանրապես չկան կատուներ:

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Գագիկը, Արշակը և Աշոտը աշխատում են որպես հաշվապահ, զանձապահ և պահեստապետ:

Գտնել թե նրանցից ով ինչ է, հաշվի առնելով հետևյալ պայմանները.

Եթե Աշոտը զանձապահ է, ապա Արշակը պահեստապետ է,

Եթե Աշոտը պահեստապետ է, ապա Արշակը հաշվապահ է,

Եթե Արշակը զանձապահ չէ, ապա Գագիկը պահեստապետ է,

Եթե Գագիկը հաշվապահ է, ապա Աշոտը պահեստապետ է:

2. Որքա՞ն ժամանակ կպահանջվի որպեսզի մարդը կտրի 100 կիլոմետրանոց չոր անապատը,
եթե՛ նա օրական կարող է քայլել 20 կիլոմետր և իր հետ ունենալ սննդի և ջրի երեք օրվա պաշար:
Պարզության համար ենթադրենք, որ սնունդը և ջուրը նա կարող է պահեստավորել մեկօրյա
ճանապարհ անցնելու վերջում միայն: